ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱԼԻՃ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

<<5> դեկտեմբերի 2018թվական ***N_34***

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ակնալիճ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 5 -ի N8 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝	կողմ	դեմ	ձեռնպահ
1.Բաղդասարյան Ա.			
2.Դավրեշյան Ա.			
3. Հակոբյան Ա.			
4.Հովհաննիսյան Կ.			
5. Մարկոսյան Ա.			
6. Մկրտչյան Ա.			
7. Նաջարյան Վ.			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ.ՄԻՍԱԿՅԱՆ**

2018թվականի դեկտեմբերի 5
գ. Ակնալիճ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱԼԻՃ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ <<5>>-Ի
N 34ՈՐՈՇՄԱՆ

ՕՐԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱԼԻՃ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

1. ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ 5-Ի N 8 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ
/ԶԵԿՈՒՅՈՂ՝ Գ.ՄԻՍԱԿՅԱՆ/

2.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱԼԻՃ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՅՈՂ՝ Գ.ՄԻՍԱԿՅԱՆ/

3.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱԼԻՃ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2019ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՅՈՂ՝ Գ.ՄԻՍԱԿՅԱՆ/

4.ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ԶԵԿՈՒՅՈՂ՝ Գ.ՄԻՍԱԿՅԱՆ/

5.ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ԶԵԿՈՒՅՈՂ՝ Գ.ՄԻՍԱԿՅԱՆ/

6.ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ԶԵԿՈՒՅՈՂ՝ Գ.ՄԻՍԱԿՅԱՆ /

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱԿՆԱԼԻՃ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

5 դեկտեմբերի 2018թվական թիվ 35-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱԼԻՃ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով , << Տեղական տուրքերի և վճարների մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ 14-րդ հոդվածներով, <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով և << Իրավական ակտերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածով Ակնալճի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ակնալիճ համայնքի վարչական տարածքում 2019 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի :

2. Տեղական տուրքերի դրույքաչափերը հաշվարկելու համար կիրառել 0.3գործակիցը :

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը :

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ կողմ դեմ ձեռնպահ

1.Բաղդասարյան Ա.
2.Դավրեշյան Ա.
3. Հակոբյան Ա.
4.Հովհաննիսյան Կ.
5. Մարկոսյան Ա.
6. Մկրտչյան Ա.
7. Նաջարյան Վ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ***Գ.ՄԻՍԱԿՅԱՆ***

2018 թվականի դեկտեմբերի5
Ակնալիճ համայնք

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱԼԻՃ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի
N —35-Ն ՈՐՈՇՄԱՆ

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱԼԻՃ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ակնալիճ համայնքում սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ,

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար տասնհինգ հազար դրամ,
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ քսանհինգ հազար դրամ,
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ քսանհինգ հազար դրամ,
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր

մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ վաթսուն հազար դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ տասնութ հազար դրամ.

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ տասնհինգ հազար դրամ.

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երկու հազար դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար երեք դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար իննհարյուր երեք դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վեց հազար երեք դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յոթ հազար հինգ հարյուր երեք դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար հինգ հարյուր երեք դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երկու հազար դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար երեք դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար իննհարյուր երեք դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վեց հազար երեք դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝յոթ հազար հինգ հարյուր երեք դրամ.

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար հինգ հարյուր երեք դրամ.

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում <<Առևտրի և ծառայությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ հարյուր հինգ դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ տասնհինգ հազար դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ երեսունհազար դրամ,

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ հարյուր հիսուն հազար դրամ,

դ. խաղատների համար՝ երեք հարյուր հազար դրամ,

ե. շահումով խաղերի համար՝ հարյուր հիսուն հազար դրամ,

զ. վիճակախաղերի համար՝ քառասունհինգ հազար դրամ.

10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար հինգ հարյուր երեք դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեք հազար երեք դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հազար հինգ հարյուր երեք դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ վեց հազար երեք դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ինն հազար երեք դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար երեք դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեք հարյուր երեք դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ վեց հարյուր երեք դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար երկու հարյուր երեք դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար չորս հարյուր երեք դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հազար հինգ հարյուր երեք դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ յոթ հազար հինգ հարյուր երեք դրամ.

11) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ վեց հարյուր դրամ,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ մեկ հազար հիսուն դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ չորս հարյուր հիսուն դրամ,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

12) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երեսուն հազար դրամ.

13) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ երեք հազար դրամ.

14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ մեկ հարյուր հիսուն հազար դրամ.

15) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ յոթ հարյուր հիսուն հազար դրամ,

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ մեկ միլիոն հինգ հարյուր հազար դրամ,

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն մեկ հարյուր հազար դրամ,

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երեք միլիոն դրամ:

16/ համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար օրացուցային տարվա համար իննսուն հազար դրամ:

II. ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ակնալիճ համայնքում սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը.

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ մեկ հազար դրամ.

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ երեք հազար դրամ.

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ երկու հազար դրամ.

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ երկու հազար դրամ.

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ երեք հազար դրամ.

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ երեք հազար դրամ.

7) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ բնակելի նպատակային նշանակության շենքերում կենցաղային աղբի համար՝

ա.ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և /կամ/ բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական հիսուն դրամ.

8/Ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և/կամ/ շինություններում, այդ թվում՝ հասարակական և արտադրական շենքերում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով.

ա.Առևտրի /այդ թվում շուկաների/, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ

ծառայություններ իրականացնող շինությունների մասով մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ հիսուն դրամ.

բ.արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ հինգ դրամ.

գ.կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով ՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ երեք դրամ.

դ. շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարն ամբողջությամբ հաշվարկվում է տնտեսական գործունեության համար սահմանված առավել բարձր դրույքաչափով:

8) համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության ոչ կենցաղային աղբի համար՝

ա.ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ երեք հազար դրամ. կամ

բ. ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար տաս հազար դրամ.

9) համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով՝ չորս հազար դրամ.

10) համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով՝ երեք հազար դրամ.

11) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ հինգ հարյուր դրամ փոխհատուցման վճար:

12/ համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց տեղական վճար չի սահմանվում:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Գ.ՇԱՌՈՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱԿՆԱԼԻՃ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

5 դեկտեմբերի 2018թվական թիվ 36 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱԼԻՃ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2019ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 19-րդ կետով , << Իրավական ակտերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածով , և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը . ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է ՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ակնալիճ համայնքի կողմից 2019թվականի ընթացքում մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը ՝ համաձայն հավելվածի :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը :

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

1.Բաղդասարյան Ա.
2.Դավրեշյան Ա.
3. Հակոբյան Ա.
4.Հովհաննիսյան Կ.
5. Մարկոսյան Ա.
6. Մկրտչյան Ա.
7. Նաջարյան Վ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ՄԻՍԱԿՅԱՆ

2018 թվականի դեկտեմբերի5
Ակնալիճ համայնք

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱԼԻՃ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի
N 36-Ն ՈՐՈՇՄԱՆ

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱԼԻՃ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ակնալիճ համայնքի իրավասության շրջանակներում քաղաքացուն տրվող , ինչպես նաև հաստատվող փաստաթղթերի համար համայնքի կողմից մատուցվող ծառայությունների համար գանձվող վճարը սահմանվում է՝

1) Համայնքի բնակիչ համարվող անձանց կտակը վավերացնելու համար՝ հինգ հազար դրամ

2) Համայնքի բնակիչ համարվող անձանց տրանսպորտային միջոց վարելու իրավունք ստանալու լիազորագիր ստանալու լիազորագիր հաստատելու համար՝ հինգ հարյուր դրամ

3) Համայնքի բնակիչ համարվող անձանց՝ աշխատավարձի և աշխատանքային հարաբերությունների հետ կապված այլ վճարներ ստանալու լիազորագիր հաստատելու համար՝ հինգ հարյուր դրամ

4) համայնքի բնակիչ համարվող անձանց տեղեկանք, բնութագիր և երաշխավորագիր տալու համար զրո դրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱԼԻՃ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

<<5>>դեկտեմբերի 2018 թվական **N 37**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 11-րդ կետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

3. Որոշել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ակնալիճ համայնքի ղեկավարի վարձատրության չափը՝ 260.0 հազար Հայաստանի Հանրապետության դրամ:
4. Սույն որոշմամբ սահմանված հաշվարկները կիրառել 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

1.Բաղդասարյան Ա.
2.Դավրեշյան Ա.
3. Հակոբյան Ա.
4.Հովհաննիսյան Կ.
5. Մարկոսյան Ա.
6. Մկրտչյան Ա.
7. Նաջարյան Վ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *ԳԵՎՈՐԳ ՄԻՄԱԿՅԱՆ*

2018 թվականի դեկտեմբերի<<5>>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱԼԻՃ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

<<5>> դեկտեմբերի 2018թվական **N38**

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 28-րդ կետով, և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ակնալճի համայնքապետարանի, աշխատակազմի բյուջետային հիմնարկների և հոակ-ի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N1, N2 և N3 հավելվածների:

2.Սույն որոշմամբ սահմանված հաշվարկները կիրառել 2019թվականի հունվարի 1-ի դրությամբ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

1.Բաղդասարյան Ա.
2.Դավրեշյան Ա.
3. Հակոբյան Ա.
4.Հովհաննիսյան Կ.
5. Մարկոսյան Ա.
6. Մկրտչյան Ա.
7. Նաջարյան Վ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *ԳԵՎՈՐԳ ՄԻՍԱԿՅԱՆ*

2018 թվականի դեկտեմբերի «5»
գ. Ակնալիճ

ՀԱՎԵԼՎԱԾ N1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱԼԻՃ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ <<5>>-Ի
N 38 ՈՐՈՇՄԱՆ

2018ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԱԿՆԱԼՃԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների քանակը՝ 13
2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը՝

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը
1	Համայնքի ղեկավար	1	260.0
2	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	195.0
	Աշխատակազմ		
1	Աշխատակազմի քարտուղար	1	205.0
2	Առաջատար մասնագետ	3	195.0
3	1-ին կարգի մասնագետ	3	115.0
	Տեխնիկական սպասարկման անձնակազմ		
1	ավտովարորդ	1	90.0
2	հավաքարար	1	80.0
3	պահակ	2	75.0
Ընդամենը		13	1910.0

Աշխատակազմի քարտուղար՝ Գ.Շառոյան

ՀԱՎԵԼՎԱԾ N2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱԼԻՃ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ <<5>>-Ի
N38 ՈՐՈՇՄԱՆ

ԱԿՆԱԼՃԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ /ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ/ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների քանակը՝ 2
2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը՝

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը
1	Մշակույթի տան տնօրեն	1	75.0
2	Գրադարանավարուհի	1	75.0
3	Դաշնամուրի Խմբակի ղեկավար /դաշնակահարուհի/	0.5	92.6
4	հավաքարար	1	75.0
	ընդամենը	3.5	271.3

Աշխատակազմի քարտուղար՝ Գ.Շառոյան

ՀԱՎԵԼՎԱԾ N3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱԼԻՃ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2018ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ <<5>>-Ի
N38 ՈՐՈՇՄԱՆ

ԱԿՆԱԼՃԻ ,, ՀՐԱՇԱՄԱՆՈՒԿ,,ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների քանակը `
2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը՝

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը
1	Մանկապարտեզի տնօրեն	1	110.0
2	Մեթոդիստ ուս.գծով տնօրենի տեղակալ	0.25	92.600
3	Դաստիարակչուհի	1.12	92.600
4	դաստիարակի օգնական	1.0	75.0
5	բուժքույր	0.5	75.0
6	Գլխ.հաշվապահ	0.5	75.0
7	Դաշնակահարուհի/երաժշտ.դաստիարակ/	0.25	92.600
8	տնտեսվար	0.25	75.0
9	խոհարար	1	75.0
10	խոհարարի օգնական	0.5	75.0
11	օժանդակ բանվոր	0.25	75.0
12	հավաքարար	0.5	75.0
13	պահակ	1	115.0
ընդամենը			1102.8

Աշխատակազմի քարտուղար՝ Գ.Շառոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱԼԻՃ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

5 դեկտեմբերի 2018թվական **N39**

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 7 -րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

Ավագանին որոշում է՝

1.Բուժ.օգնության նպատակով համայնքի բնակիչ՝ Աշոտ Վալիկոյի Հովհաննիսյանին հատկացնել 100,0հազ.դրամ գումար:

2. Համայնքի 1-ին և 2-րդ կարգի հաշմանդամներին տալ 550.0հազ.դրամ գումարի աջակցություն՝ համաձայն հավելված 1-ի:

3.Որպես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի գումար համայնքի դպրոցին աջակցել 65,0հազ դրամ գումարով:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

1.Բաղդասարյան Ա.
2.Դավրեշյան Ա.
3. Հակոբյան Ա.
4.Հովհաննիսյան Կ.
5. Մարկոսյան Ա.
6. Մկրտչյան Ա.
7. Նաջարյան Վ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ.ՄԻՍԱԿՅԱՆ**

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱԼԻՃ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ <<5>>-Ի
N 39 ՈՐՈՇՄԱՆ

Ցուցակ

1-ին և 2-րդ կարգի հաշմանդամների

Միսակյան Սեդրակ	20.0
Ղարիբյան Ստեփան	20.0
Խաչատրյան Սամվել	20.0
Տոնոյան Ժանետա	20.0
Դավրեշյան Վաքիլ	20.0
Սուքիասյան Մարիամ	20.0
Գրիգորյան Ալեքս	20.0
Ավետիսյան Մարիանա	20.0
Սուվարյան Սմբատ	15.0
Բարսեղյան Ռաֆիկ	15.0
Սուքիասյան Զվարթ	15.0
ՈՒստյան Սերյոժա	15.0
Ավդալյան Հովհաննես	15.0
Եղիազարյան Համլետ	15.0
Կարապետյան Ազատ	15.0
Միքայելյան Քիշմիշ	15.0
Ասրյան Ստյոպա	15.0
Սարգսյան Աշոտ	15.0
Վարդանյան Սերգո	15.0
Կիրակոսյան Սուսաննա	15.0
Մինասյան Ռուբեն	15.0
Խաչատրյան Նարեկ	15.0
Բաղդասարյան Աշոտիկ	15.0
Իբոյան Զինե	15.0
Մուրադյան Թամարա	15.0
Մանուկյան Գագիկ	15.0
Հարությունյան Անուշ	15.0
Կարապետյան Կարինե	15.0
Խաչատրյան Ռոզա	15.0
Հակոբյան Ռոզա	15.0
Հայրապետյան Դավիթ	15.0
Գալստյան Հայկ	15.0
Գալստյան Հասմիկ	15.0
Մարկոսյան Պերճ	15.0